



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 59 66 59, քարտուղարություն հեռ.՝ 59 61 25

№ 24/1049

« 04 » 05 2016թ.

Ձեր

2/2214-16  
05.05.16թ.

**Հայաստանի Հանրապետության  
մարդու իրավունքների պաշտպան  
պարոն Ա.ԹԱԹՈՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Թաթոյան**

Ձեր համաձայնեցմանն է ուղարկվում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Խնդրում եմ նախագծի վերաբերյալ Ձեր առաջարկությունները և առարկությունները հնարավոր սեղմ ժամկետում ուղարկել ՀՀ ոստիկանություն:

Առդիր « 6 » թերթ:

ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ

Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Իրավաբանական վարչություն  
Կապարող՝ Ա. Արրահամյան  
հեռ՝ 596-704

ՔՐՄԱՐԴԻ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ  
Ա Շ Ն Ա Տ Ա Կ Ա Ջ Ա  
ՄՏԻՑ ԹԻՎ Ո-135  
« 05 » 05 2016թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### Օ Ր Ե Ն Ք Ը

#### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության 1995 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-16 օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ հոդվածից «, իսկ մինչև 16 տարին լրանալը՝ նաև ծննդյան վկայականը կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հավաստող վկայականը» բառերը հանել:

**Հոդված 2.** Օրենքի 10-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 2-րդ կետում «օտարերկրյա քաղաքացի» բառերից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող» բառերը, իսկ «2016» թիվը փոխարինել «2017» թվով.

2) 1-ին մասի 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Սույն կետի հիմքով անձը համարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած, եթե օրենքով սահմանված կարգով դիմել և ստացել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ: Այս դեպքում անձնագիր ստանալուց հետո անձը համարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած՝ Հայաստանի Հանրապետության 1995 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-16 օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:»:

**Հոդված 3.** Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասում «երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների գրավոր համաձայնությամբ» բառերը փոխարինել «երեխան, անկախ այլ պետության քաղաքացիություն ունենալու հանգամանքից, իրավունք ունի ձեռք բերել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝ ծնողների գրավոր համաձայնությամբ»:

2) 4-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) եթե երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետությունում և առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը»:

**Հոդված 4.** Օրենքը լրացնել 12.1-րդ հոդվածով հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 12.1 Ազգությամբ հայ երեխայի քաղաքացիությունը, ում ծնողները Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չեն**

1. Ազգությամբ հայ երեխան, ում ծնողները Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չեն, Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելու պահից ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր ստանալու համար ներկայացված դիմումի հիման վրա, որին կցվում է նաև ծնողների գրավոր համաձայնությունը:

**Հոդված 5.** Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) որն առնվազն երկու տարի օրինական ամուսնության մեջ է գտնվում Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ կամ ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխա»:

**Հոդված 6.** Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 7.** Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին պարբերությունում լրացնել նոր նախադասություն հետևյալ խմբագրությամբ.

«Սույն օրենքի 11-րդ, 12.1-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ հոդվածներով պահանջվող համաձայնություններն անձամբ ներկայացնելու անհնարինության դեպքում դրանց վրա անձանց ստորագրության իսկությունը վավերացվում է նոտարական կարգով»:

**Հոդված 8.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### 1. Ընթացիկ իրավիճակը և ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի նախապատրաստումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականին կատարված փոփոխությունների արդյունքում գործող օրենքը Սահմանադրության 47-րդ հոդվածի պահանջներին համապատասխանեցնելու, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում առաջացած որոշակի խնդիրներ և օրենսդրական բացերը կարգավորելու անհրաժեշտությամբ:

### 2. Կարգավորման նպատակը և բնույթը

ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի պահանջներին համապատասխանեցնելու, ինչպես նաև հասարակական հարաբերությունների զարգացման ընթացքում առաջացած որոշակի խնդիրներն ու օրենսդրական բացերը կարգավորելու նպատակով օրինագծում նախատեսվել են հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

Օրինագծի 1-ին հոդվածի վերաբերյալ - Մինչև 16 տարեկան անչափահասների համար որպես ՀՀ քաղաքացիությունը հավաստող փաստաթղթեր ներառված են ծննդյան վկայականը կամ քաղաքացիությունը հավաստող վկայականը: ՀՀ օրենսդրությամբ ՀՀ քաղաքացիությունը հավաստող վկայական և այն տրամադրելու ընթացակարգ նախատեսված չէ, իսկ ծննդյան վկայականը չի կարող քաղաքացիության հավաստման հիմք հանդիսանալ, քանի որ ՀՀ-ում ծնված ցանկացած երեխայի /այդ թվում նաև՝ օտարերկրյա քաղաքացի հանդիսացող/ տրամադրվում է նույն ծննդյան վկայականը: ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխաներին օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրվում է ՀՀ քաղաքացու անձնագիր, ինչն էլ նրա համար օտարերկրյա պետությունում կարող է հանդիսանալ ՀՀ քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ:

Օրինագծի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվող լրացումը նպատակ ունի հստակեցնել, որ ՀՀ քաղաքացի կարող են ճանաչվել նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքացիները, եթե մշտապես բնակվում են ՀՀ-ում, քանի որ 10-րդ հոդվածի 2-րդ մասի ներկայիս խմբագրությունը տարընկալումների տեղիք է տալիս և երբեմն մեկնաբանվում որպես առանձին պայման՝ նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքացիներին ՀՀ քաղաքացի ճանաչելու ժամանակ:

Հոդվածի 2-րդ մասով նախատեսվող լրացման վերաբերյալ - ներկայումս իրավակիրառ պրակտիկայում առաջացել են խնդիրներ այն անձանց համար, ովքեր տարիներ շարունակ /դեռևս 1980-1990-ական թվականներից/ բնակվում են օտարերկրյա պետությունում, սակայն տվյալ երկրի քաղաքացիություն ստացել են «ՀՀ

քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ օրենք/ ուժի մեջ մտնելուց /1995թ-ից/ հետո: Այն դեպքում, երբ օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից կատարվում են գրավոր հարցումներ՝ հիշյալ կատեգորիայի անձանց ՀՀ քաղաքացիություն ունենալու հանգամանքը պարզելու նպատակով, ՀՀ ոստիկանության ԱՎՎ կողմից տրվում է պատասխան, որ նրանք գործող օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով ճանաչվում են ՀՀ քաղաքացի, քանի որ այլ պետության քաղաքացիություն ձեռք են բերել Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո /օրինակ՝ 1997թ-ին/: Նշված հանգամանքը անձանց համար խնդիրներ է առաջացնում օտարերկրյա պետությունում իրենց իրավունքներն իրականացնելիս, հաճախ նույնիսկ տվյալ պետության կողմից դադարեցվում է այդ անձանց քաղաքացիությունը, այն պարագայում, երբ նրանք տասնյակ տարիներ ապրում և աշխատում են մի երկրում, որտեղ գտնվում է նրանց կենսական շահերի կենտրոնը, իսկ Հայաստանի Հանրապետության հետ որևէ իրավական, սոցիալական, տնտեսական կամ այլ կապ այլևս չունեն: Արդյունքում՝ այդ անձինք հայտնվում են այնպիսի իրավիճակում, որ ՀՀ վերադառնալ չեն կարող, տվյալ պետությունում մնալը նույնպես խնդիրներ է առաջացնում: Նշված հարցին լուծում տալու նպատակով օրինագծով նախատեսվում է 10-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն որի ՀՀ քաղաքացիներ կճանաչվեն օրենքի ուժի մեջ մտնելու դրությամբ Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվող ազգությամբ հայ նախկին ՀԽՍՀ քաղաքացիները, եթե դիմելու պահի դրությամբ չունեն այլ երկրի քաղաքացիություն և օրենքով սահմանված կարգով դիմել ու ստացել են ՀՀ քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ: Այս դեպքում անձնագիր ստանալուց հետո անձը կհամարվի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած՝ Հայաստանի Հանրապետության 1995 թվականի նոյեմբերի 6-ի ՀՀ-16 օրենքի ուժի մեջ մտնելու պահից:

Օրինագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ - Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն այն դեպքում, երբ ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների գրավոր համաձայնությամբ: Այս նորմի կիրառումը պրակտիկայում տարընկալումների տեղիք է տալիս երեխայի ՀՀ քաղաքացիության որոշման ժամանակ՝ այն դեպքում, երբ երեխան ունի այլ պետության քաղաքացիություն: Հետևաբար օրինագծով նախատեսվում է 11-րդ հոդվածի 3-րդ մասը հստակեցնել, համաձայն որի երեխայի այլ պետության քաղաքացիություն ունենալու հանգամանքը չի կարող խոչընդոտ հանդիսանալ նրա ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու Սահմանադրական իրավունքի իրացման համար:

Օրինագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսվող լրացման վերաբերյալ - ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք: Նշված իրավունքի

իրացման համար նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվում է օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասում կատարել լրացում և ձևողներից մեկի ՀՀ քաղաքացի հանդիսանալու պարագայում, նրա դիմումի հիման վրա, առանց օտարերկրյա պետության քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնության ՀՀ-ում բնակվող երեխային իրավունք վերապահել ձեռք բերելու ՀՀ քաղաքացիություն:

Կատարվող լրացման նպատակը կայանում է նաև նրանում, որ պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ երեխան ծնվում է օտարերկրյա պետությունում, ձեռք է բերում տվյալ երկրի քաղաքացիություն, սակայն ծնողների անհաշտության կամ այլ պատճառով ՀՀ քաղաքացի հանդիսացող ծնողի հետ վերադառնում և մշտապես բնակվում ՀՀ-ում: Տվյալ պարագայում ՀՀ քաղաքացի չհանդիսանալու հանգամանքը խոչընդոտ է ստեղծում երեխայի իրավունքները Հայաստանի Հանրապետությունում լիարժեք իրացնելու ընթացքում /մասնավորապես, երեխան չհանդիսանալով ՀՀ քաղաքացի չի կարողանում օգտվել անվճար բուժօգնության կամ սոցիալական որևէ այլ ծառայությունից, ժամանակի ընթացքում լրանում է նաև օտարերկրյա պետության կողմից տրված անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետը, իսկ ՀՀ քաղաքացի հանդիսացող ծնողը սոցալական կամ այլ պատճառներով պայմանավորված չի կարողանում երեխայի համար ձեռք բերել անձնագիր և այլն/:

Բացի այդ՝ «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը թույլատրում է օտարերկրյա քաղաքացուն ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում, եթե ծնողը երեխայի հետ մշտապես բնակվում է ՀՀ-ում, առանց մյուս ծնողի համաձայնության երեխային փաստաթղթավորել ՀՀ քաղաքացու անձնագրով, հետևաբար միասնական մոտեցում ապահովելու նպատակով, հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը, նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվել է կատարել համապատասխան լրացում և ձևողներից մեկի ՀՀ քաղաքացի հանդիսանալու պարագայում առանց օտարերկրյա պետության քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնության ՀՀ-ում բնակվող երեխային իրավունք վերապահել ձեռք բերելու ՀՀ քաղաքացիություն:

Ինչ վերաբերում է 3-րդ հոդվածի 2-րդ մասի ներկայիս խմբագրությանը, ապա նշված նորմը պրակտիկայում երբևէ չի կիրառվել, քանի որ ծնողների մշտապես ՀՀ-ում բնակվելու հանգամանքը միանշանակ որոշել հնարավոր չէ:

Օրինագծի 4-րդ հոդվածի վերաբերյալ - Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 47-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելու պահից ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք, իսկ 4-րդ մասը սահմանում է, որ ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ձեռք են բերում օրենքով սահմանված պարզեցված կարգով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործող օրենսդրությամբ չարհահաս անձանց համար արդեն իսկ նախատեսված է ՀՀ քաղաքացիությունը պարզեցված կարգով ձեռք բերելու իրավունք՝ անկախ ՀՀ-ում բնակություն հաստատելու հանգամանքից, օրինագծի 3-րդ

հոդվածով, ՀՀ Սահմանադրության հիշյալ հոդվածին համապատասխանեցնելու նպատակով, ՀՀ քաղաքացի չհանդիսացող ծնողների ազգությամբ հայ երեխաներին ՀՀ-ում բնակություն հաստատելու պահից իրավունք է վերապահվում ձեռք բերելու ՀՀ քաղաքացիություն: Ընդ որում՝ ազգությամբ հայ օտարերկրյա քաղաքացիներ չի երեխան ձեռք կրելի ՀՀ քաղաքացիություն ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու համար ներկայացված դիմումի և երկու ծնողների գրավոր համաձայնության հիման վրա:

Օրինագծի 5-րդ հոդվածով նախատեսվող լրացումը նպատակ ունի բացառելու ՀՀ քաղաքացիություն ստանալու համար օտարերկրացիների ձևական ամուսնությունը ՀՀ քաղաքացիների հետ, ինչը պրակտիկայում տարածված քնույթ է կրում: Միաժամանակ, հիշյալ կարգավորման շրջանակներում ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջների համաձայն ազգությամբ հայերի պարզեցված կարգով ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքը կստանա առավել տարբերակված դրսևորում՝ մյուս դեպքերի նկատմամբ:

Օրինագծի 6-րդ հոդվածի վերաբերյալ - «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ծնողների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում 14-18 տարեկան երեխայից ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու համար պահանջվում է գրավոր համաձայնություն: Սակայն պրակտիկայում նշված նորմը գրեթե չի իրագործվում, քանի որ 14-16 տարեկան երեխաների ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու հարցը իրականում որոշում են ծնողները և երեխայի համաձայնությունը ստանալը կրում է ձևական քնույթ: Ինչ վերաբերում է 16-18 տարեկան երեխաներին, ապա «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի համաձայն 16 տարին լրացած անձն իրավունք ունի դիմելու ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու համար, հետևաբար, դիմումն ինքնին ենթադրում է համաձայնություն և առանձին համաձայնություն տալը դառնում է ավելորդ վարչարարություն. տվյալ դեպքում առանձին ճանաչման գործ չի կազմվում և անհրաժեշտ ուսումնասիրություններն ու փաստաթղթավորումը կատարվում է անձի դիմումի հիման վրա: Հետևաբար 16-18 տարեկան անձինք կարող են անձամբ դիմել ՀՀ քաղաքացու անձնագրով փաստաթղթավորման համար: Այս պարագայում դիմումի ըննարկման ժամանակ կպահանջվի միայն հիշյալ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով պահանջվող համաձայնությունները կամ անհրաժեշտ հիմնավորումներ՝ ՀՀ քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում երեխայի քաղաքացիություն չունեցող անձ դառնալու հանգամանքի վերաբերյալ /16 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ/:

Օրինագծի 8-րդ հոդվածի վերաբերյալ - ՀՀ կառավարության 1998թ. դեկտեմբերի 25-թի թիվ 821 որոշմամբ հաստատված՝ ՀՀ-ում անձնագրային համակարգի կանոնադրության 12-րդ կետի 2-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան հոդվածներով նախատեսված դեպքերում, եթե ծնողն անձամբ չի կարող ներկայացնել համաձայնությունը, ապա ներկայացվող համաձայնության վրա նրա ստորագրության իսկությունը պետք է վավերացված լինի նոտարական կարգով:

Ելնելով վերոգրյալից, միասնական վարչարարություն ապահովելու, ինչպես նաև քաղաքացիության ձեռք բերման կամ դադարեցման գործերով կեղծիքներից խուսափելու ու լրացուցիչ երաշխիք ապահովելու համար, նպատակահարմար է, որպեսզի օրենքով նախատեսված համաձայնությունները ներկայացվեն նոտարական վավերացմամբ:

**3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.**

Նախագիծը մշակվել է ՀՀ ոստիկանության կողմից:

**4. Ակնկալվող արդյունքը.**

Նախագծի ընդունման արդյունքում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում 2015 թվականին կատարված փոփոխություններով պայմանավորված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը կհամապատասխանեցվի Սահմանադրության 47-րդ հոդվածի պահանջներին, ինչպես նաև կկանոնակարգվեն իրավակիրառ պրակտիկայում առաջացած որոշակի խնդիրներն ու օրենսդրական անհամապատասխանությունները:

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին

Մ/մլն.դրամ/

Պետական բյուջեի կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վրա ազդեցությունը					
Ցուցանիշներ	ընթացիկ 2016թ.		Հաջորդող 3 տարիները		
	Ըստ 2016թ. պետական բյուջեի	Փոխությունը 2016թ. պետական բյուջեի համեմատ	2017թ.	2018թ.	2019թ.
1	2	3	4	5	6
1. Եկամուտներ	0	0	0	0	0
1.1. պետական բյուջեի եկամուտներ	0	0	0	0	0
1.2. ՏԻՄ եկամուտներ	X	X	X	X	X
2 Ծախսեր	0	0	0	0	0
2.1 պետական բյուջեի ծախսեր	0	0	0	0	0
2.2. ՏԻՄ բյուջեի ծախսեր	X	X	X	X	X
3. Ֆինսկալ ազդեցության գնահատական					
3.1. պետական բյուջե					
3.3 ՏԻՄ բյուջե					
4 Եկամուտների և ծախսերի հաշվարկների մանրամասն ներկայացում (անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել հավելվածի տեսքով)					
4.1. Եկամուտների գնահատում					
4.2 Ծախսերի գնահատում					
5 Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)					

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ անհրաժեշտություն կառաջանա փոփոխություններ և լրացումներ կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի «ՀՀ քաղաքացիություն ստանալու, ինչպես նաև ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դիմումների քննարկման կարգը սահմանելու, ՀՀ քաղաքացիությունը հաստատող վկայականի ձևը և ազգությամբ հայ լինելը հավաստող մկրտության մասին փաստաթուղթ տրամադրող եկեղեցական կառույցների ցանկը սահմանելու մասին» N1390-Ն որոշման մեջ:

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ**